

**Կենսաբանություն, ԳԳՐՈՑԱԿԱՆ ՓՈԽԼ
տևողությունը 60 րոպե
9-րդ դասարան**

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որն, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

1. Կամքիումն իրենից ներկայացնում է.

- 1) Արմատապատյան, որը պաշտպանում է արմատի ծայրը
- 2) Փոխադրող հյուսվածք, որով տեղաշարժվում են օրգանական նյութերը
- 3) Հիմնական հյուսվածք, որի բջիջները քլորոպլաստներ են պարունակում
- 4) Գոյացնող հյուսվածք, որի երիտասարդ բջիջները անընդհատ բաժանվում են

2. Հակամարմիններ սինթեզելու ունակությամբ օժտված են.

- 1) T-լիմֆոցիտները
- 2) B-լիմֆոցիտները
- 3) T և B-լիմֆոցիտները
- 4) T և B-լիմֆոցիտներն ու մակրոֆագերը

3. Մալարիայի հարուցիչի կենսական ցիկլն ընթանում է.

- 1) Մարդու արյան մեջ → մոծակի թքագեղձերում → մոծակի աղիներում
- 2) Քաղցրահամ ջրի մեջ → մոծակի թքագեղձերում → մարդու արյան մեջ
- 3) Մարդու լյարդի բջիջներում → մարդու արյան մեջ → մոծակի ստամոքսում
- 4) Մոծակի թքագեղձերում → մոծակի արյան մեջ → մարդու արյան մեջ

4. Ստորև թվարկածներից որի՞ բացակայության դեպքում արյան մակարդումը տեղի ունենալ չի կարող.

- 1) ալբումինների
- 2) լեյկոցիտների
- 3) նատրիումի իոնների
- 4) կալցիումի իոնների

5. Քլամիդոմոնադի լուսազգայուն աչիկը

- 1) գտնվում է թաղանթում
- 2) ամբողջությամբ ընկղմված է ցիտոպլազմի մեջ
- 3) գտնվում է արտաթորման վակուոլի մեջ
- 4) գտնվում է քրոմատոֆորի վրա

6. Քաղցրամ ջրերի ոսկրայի ձկներն արտազատում են.

- 1) մեծ ծավալների մեզ՝ աղերի ցածր պարունակությամբ
- 2) մեծ ծավալների մեզ՝ աղերի բարձր պարունակությամբ
- 3) ոչ մեծ ծավալների մեզ՝ աղերի ցածր պարունակությամբ
- 4) ոչ մեծ ծավալների մեզ՝ աղերի բարձր պարունակությամբ

7. Ստորև թվարկած կենսաքիմիական գործընթացներից բույսերի բջիջներին բնորոշ չէ.

- 1) գլիկոլիզ
- 2) օքսիդատիվ ֆոսֆորիլացում
- 3) ֆոտոզնչառություն
- 4) միզանյութի սինթեզ

8. Թվարկած հորմոններից սպիտակուցային բնույթի նյութերին է պատկանում.

- 1) նորադրենալինը
- 2) կորտիզոլը
- 3) գլյուկագոնը
- 4) տեստոստերոնը

9. Հասկ ծաղկաբույրը բնորոշ է .

- 1) հովտաշուշանին
- 2) յասամանին
- 3) տարեկանին
- 4) եզան լեզվին

10. Քորդավորների մարմնի խտոջը.

- 1) առաջնային է
- 2) երկրորդային է
- 3) խառն է
- 4) բացակայում է

11. Թքագատման կենտրոնները գտնվում են

- 1) միջին ուղեղում
- 2) ուղեղիկում
- 3) միջանկյալ ուղեղում
- 4) երկարավուն ուղեղում

12. Նեյրոնների մեծամասնության հանգստի պոտենցիալն առաջանում է որոշակի կանալների (անցուղիների) աշխատանքի շնորհիվ: Ո՞ր իոնների համար են սպեցիֆիկ այդ կանալները

- 1) քլորի
- 2) նատրիումի
- 3) կալիումի
- 4) մագնեզիումի

13. Ախորժակը չի ճնշվում

- 1) լեպտինով՝ հորմոնով, որն արտադրվում է ճարպային հյուսվածքի կողմից
- 2) PYY հորմոնով, որն արտադրվում է բարակ աղիքների կողմից
- 3) ինսուլինով, որն արտադրվում է ենթաստամոքսային գեղձի բջիջների կողմից
- 4) թիրոքսինով, որն արտադրվում է վահանաձև գեղձի կողմից:

14. T-հեղիներ լիմֆոցիտների ընկալիչներն առավել լավ են ճանաչում

- 1) առանձին պոլիմերային մոլեկուլներ (հակաձիններ)
- 2) միայն հակաձիններ (անտիգեն), որոնք ունեն 30 կԴա –ից մեծ մոլեկուլային զանգված
- 3) հակաձիններ՝ կապված I կարգի հյուսվածքահամատեղելիության գլխավոր համալիրի հետ
- 4) հակաձիններ՝ կապված II կարգի հյուսվածքահամատեղելիության գլխավոր համալիրի հետ

15. Ասպերգիլները ներկայացուցիչներ են

- 1) բակտերիաների
- 2) արքեյաների
- 3) միկրոմիցետների
- 4) խմորասնկերի

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Ի-ՌՆԹ-ի մոլեկուլը պարունակում է 22% ադենին, 36% գուանին և 14% ցիտոզին: Քանի՞ տոկոս թիմին է պարունակում ԴՆԹ-ի համապատասխան տեղամասը:

17. Հայտնի է, որ ԴՆԹ-ի մի տեղամասում 10 նուկլեոտիդ միացած են 3-ական ջրածնական կապերով, իսկ 40 նուկլեոտիդ՝ 2-ական: Որոշեք ադենինային նուկլեոտիդի տոկոսային պարունակությունն այդ տեղամասում:

18. Սպիտակուցը պարունակում է 0.5% գլիցին: Ինչի՞ է հավասար այդ սպիտակուցի մոլեկուլային զանգվածը կԴա-ներով, եթե գլիցինի մոլեկուլային զանգվածը 75 է:

19. Քանի՞ ժամ են կծկվել մարդու սրտի նախասրտերը 2020թ. առաջին 3 ամիսների ընթացքում, եթե սրտային մեկ բոլորաշրջանը տևել է 0.8վ :

20. Մնման շղթայի յուրաքանչյուր օղակում պահպանվում է էներգիայի 10%-ը: Որքա՞ն պետք է լինի որոշակի տարածքում պրոդուցենտների կենսազանգվածի նվազագույն աճը, որպեսզի գիշատիչ կաթնասունների զանգվածը նույն տարածքի վրա մեծանա 1,3 կգ-ով: